

զարգացմամբ, թէ որ հիտեւ արար յաջողին ամեն կարևորութիւնքն, զօրս ստիպեալ գտանի Հոգաբարձութիւնս լրուցանելց ըստ շափու ձեռնահաւսութեանց և միջոցաց, մանաւանդ ըստ ուսումնաւ մասին. յորոց զիմաւորն է կարօտութիւն երկու Աւսուցաց, որոնք թէ որ բարձր ուսմամբ զարգացած չ լինին՝ պէտք է որ համապատասխաննեն դժունք Գիմնազիական ուսման ընթացքն յառաջադիմութեամբ ամենայն առարկայից մէջ աւարտած անձի մը, որոց մասին ահաւասի՛կ հրաւեր կարգալով յունիս ցանկացողաց Հոգաբարձութիւնս յուսայ, որ ամենայն ոք այնպիսի ուսմամբ զարգացած եթէ բարեհաճի, թող նախընթացաբար զրաւոր կերպի յայտնէ Բարեհան Փօխանորգական Յաջորդին վիճակիս, թէ վասն որպիսի առարկայից դասախոսութեանց և որպիսի պայմանաւ յօժարի վարել պաշտօն ուսուցութեան այս Դպրոցի մէջ ի հարկէ հաղորդելով ընդ նմին տեղեկութիւն ի մասին ուր և որպիսաբար աւարտելցն իւր ուսման ընթացքն Այս տեղեկութիւնն և առաջարկութիւնն ստանալով պարտաւորի Հոգաբարձութիւնս իւր հսգաբարձական ժողովց մէջ խորհրդածելով պատասխանել փոյթ միջոցաւ: Աւրեմն թող Հայասէր Ամսազիրդ բարեհաճի արս փոքրիկ ազգաբարձութիւնն ամփափել իւր առջիւնաշատ թերթերի մէջ նպատակաւ օգնելց կարևոր զրութեանն մեր Աւսումնարանի, լրցուցանելց այնու եթէ Տէր յաջողեացէ՝ զգալի հարկաւորութիւնն նորին և պարտաւոր կացուցանելոյ Հայազգիս և աշխատաւոր:

Հ Յ Ա Բ Ա Ր Ա Տ

ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

ՀՄՈՄԷՆ ՆՈՐ ՆՈՒՏՐԱԿ ՄԸ*

Այս օրերս կը լսենք որ Հոռոմէն նուիրակի անուամբ Լատին եկեղեցական մը Աստանդնուողօիս պիտի գայ — Հայ Քամթօիկ ազգայնոց ինը լրցըն համար, Ազգայնոց միշողութեան կառաջարիկմ որ Կիլիկիոյ Լեռն թազաւորին ժամանակը երր Հոռոմայ կողմէն իր նուիրակ Քարտինապ մը առաքեցաւ մեր ազգային գործոց միջամուտ ըլլալու համար, Աստանածաէր և Ազգասէր Լեռն թազաւորը իրեն հրամայեց որ ուստի եկեր է հան ետ դառնայ, և Քարտինալը Տարսոն չի հասած հարկադրեցաւ Կիլիկիոյ թագաւորութեան սահմաններէն հեռանալու: Կայնը կրնան ընել Ազգայինք ներկայ ժամանակին մէջ:

Հոռոմէն եկող նուիրակը կամ հաւատոց վրայ պիտի բանակցի, կամ Ազգային գործողութեանց

վրայօք Հաւատոց վերաբերեալ նիւթոց վրայ բանակցութիւն ընելու հարկ չի կայ, վասն զի ներկայ վեճը և ինպիրը հաւատոց վէճ կամ իրն զիր չէ, եւ ոչ իսկ ազգային գործողութեանց միջամուտ կրնայ ըլլալ: Վասն զի այս գործողութիւնները կամ եկեղեցական են, կամ ժամանակաւոր է: Եթէ եկեղեցական են, մէկ նուիրակ մը, կամ առ անձին առեալ միայն Արևմտեան եկեղեցին և Արևմտեան Պատրիարքութիւնը չի կարենար փոխել և ջնջել այն իրաւունք և արտօնութիւնք, կանոն և սահմանադրութիւնները, զորս Ընդհանուր ժողովք սուրբ Հարք, Հայրապետք և Արքապետք Արևելեան և Արևմտեան եկեղեցւոց վճիներով հաստատուած և պատուիրած են. և ասոր համար վեխոյթիթիւններ բերել հարկ չէ, վասն զի ամենուն ծանօթ է: Իսկ եթէ այս գործողութիւնները ժամանակաւոր են, միշեն Ազգայինք մէկ Հոռոմէն եկող նուիրակ մը ազգաց իրաւանց և օրինաց հակառակ գործած կը լլալ, երբ նկըն մեր ազգայնոց օտար ըլլալով՝ ազգային ժամանակաւոր գործողութեանց միջամուտ ըլլալու:

Օրէնք և իրաւունք ազգաց՝ ամեն ազգի առջեւ յարգեալ և պատկառելի են: Միթէ Գերմանացին եւտալացւոյն գործողութեան միջամտութիւն կրնայ ընել առանց անիրաւութիւն ժամանակածուած ըլլալու անոր ազգային օրինաց և իրաւանց: Աւստի օրինազանց և ազգային իրաւանց բոնարար անիրաւութիւն և մեծ անարգութիւններած կը լլալ Հոռոմայ նուիրակը, եթէ որ և իցէ կերպով մեր ազգային գործողութեանց միջամտութիւն ընելու յանդգնի:

Բայց ի՞նչ է արդեօք այսպիսի նուիրակի մը գալուն բոն պատճառը: Պատասխան տալէս առաջ կը ցանկամ որ ազգայինք զանազաննեն Հոռոմայ եկեղեցին Հոռոմայ Արքունիքէն, այսինքն՝ այն որ հաւատոց վերաբերեալ է, նոյն է Հոռոմայ եկեղեցւոյն և ընդհանուր սուրբ եկեղեցւոյն, և այս նոյն հաւատքով կը լլալ միութիւն ի հաւատոց Արևելեան եկեղեցին և Արևմտեան եկեղեցւոյն, և պէսոք է որ ամեն քրիստոնեաց այս միութիւնը ընդունի, յարգէ և պատուէ: Իսկ այն որ ազգաց եկեղեցական և ժամանակաւոր գործողութեանց կը վերաբերի, իւրաքանչիւր ազգ իր գործողութեանց տէր է, և պէսոք է որ իր ազգութիւնը պահէ, պաշտպանէ և առաջ տանի: Ընդհակառակն, Հոռոմայ Արքունիքաց ներկայ բանած ընթացքը բարութիւնն պարսուելի և ամենեցուն ատելի եղած է, և պատճառ զանազան և ցաւալի բաժանմանց: Հետեւեալ զէպքին միշատակութիւնը բաւական ըլլալ իմ խօսիս հաստատութեանը:

Հոռոմայ Արքունիքը Արևմտեան ազգաց գործողութեանց միջամուտ ըլլալով՝ և տիրապետութեան ոգւց Հետևեած ըլլալով՝ մեծ կրուստ և վետաներ կրեց: Արևմտեան Տէրութիւնները Հոռ

(*) Կամսովիկ ազգային մը զրած է, այս յօդուածը:

մայ Ալբունեաց այս միջամտովթեան և տիրապետութեան ոգուցն հակառակ կ'ցեր են և մանաւանդ հիմոց Հռոմեաց Արքունեաց ժամանակաւոր իշխանութիւնը դադարեալ ըլլալուն համար ամեն քրիստոնեաց Տէրութիւնն հաճեալ հաւանեալ և զոհ եղած են. վասն զի վերջացաւ և զրեթէ ոչնչացաւ Հռոմեաց Ալբունեաց տիրապետութեան այն ոգին, որ կրօնիքի պատրուակաւ ազգաց և բռը քրիստոնէութեան մէջ յարատե երկպառակութիւն և անհանդատութիւն կը պատճառէր, և թիրես ալ տակաւին պատճառերու կը ջանայ Խոսքերս այնպիսի եղեղութեանց վրայ հիմնեալ են, որ ոչ ոք կրնայ ուրանալ. վասն զի վերջին տարուան զէազքերը և յեղագիտութիւնները աշքերնուու առնեն են.

Հոսմայ Արքունիքը զիտնալով որ միջամտութեամբ իր տիրապետութեան ողին Արևմտաքի մէջ առաջ չի պիտի կարենայ տանիլ, իր զիտողութիւնը Արևելքի վրայ դարձոց, և իր գործքը առաջ տանելու համար իրեն մասնակից կամակից և կը գործիք գտաւ Գիր. Հասունը, որուն ինչ ըլլալը ամենուն յայտնի է, Այս տեղեկութիւնները համառ օտարար նշանակելէն յետոյ, վերի հարցմունքին պատասխանը այս է. Հոսմէն նուիրակ գալուն բռն պատճառը Հոսմայ Արքունեաց Երևելքի վրայ տիրապետութեան ողի գործածեն է. Բայց զիտնայ Հոսմայ Արքունիքը, որ իր տիրապետութեան ողին Արևմտաքի մէջ առաջ չերթարակ, Արևելքի մէջ բոլորովին պիտի տիկարանայ և ոչնշանաց.

Հոռոմայ Արքունիքը Երե ելցոց համար չե յան-
զգնի անարդարաբար Բառ-Ք+ անունը արտարերելու:
Մեր քաջապահղթ Ինքնակալին վարչութեամբ Օս-
մաննեան Տէրութեան մեջ այնպիսի պաշտօնա-
տէրներ կան, որ բնաւ չեն թողուր որ մէկ օտար
մը ազգաց օրինաց և իրաւանց դէմ բոնարարու-
թին ընէ, Գիտնա Հոռոմայ Արքունիքը որ նոյն
խէկ մէր ազգայնոց մեջ այնպիսի արի, աստուա-
ծասէր, ազգասէր և քաջանուն իշխաններ, և ա-
ւանդապահ, զիտուն և առ աքինի եկեղեցական-
ներ կան, որ իրենց անպարտելի միութեամբը և
անխոնջ զիութեաջանութեամբը ազգային ներքին և
արտաքին թշնամիները յաղթաշարելով և նուա-
ճելով՝ ազգային իրաւունք և արտօնութիւննքը,
մէկ խօսքեվ՝ ազգութեանը ամբողջ պիտի պաշտին,
և իրենց յաջորդաց և որգուց լիահկատար պիտի
աւանդնեն, և յետազայից ալ փառք և պարծանք
պատճառելով անմահ իշխատակաց արժանի պիտի
ըլլան:

Ազգայինք, յիշեցէք որ Հռոմէն երկրորդ նորի-
բակի մը զայտ Հռոմաց Երքունեաց պարտութեան
և անարդութեան նշան է. Հռոմաց Երքունեաց
տիրապետութեան ոգին չէ թէ Հռոմաց համար
յաղթութիւն, այլ նուածութիւն պատճառ եց, և
միշտ պիտի պատճառ է. Իրաւանց պաշտպանը
հաստած է, և Ազգութեան պաշտպանութիւնը

թէ Աստուծոյ և թէ մարդկանց առջև մէծ առաքինութիւն և արգարածութիւն է: Հռոմայ Արքունիքը Հասունին ձեռքով մէր ազգային արգարացի իրաւունքը յափշտակելու յանդգնեցաւ, և իր կարծիքալ իրաւունքնիրէն և ժամանակաւոր իշխանութենէն զրկուեցաւ:

Ազգայինք, Հռոմեն եկող նուիրակին ըսենք որ
Հռոմայ Աբրունիքը իր կարծեցեալ իրաւունքը
չի կորսնցնելու համար աշխարհ անցում ըրաւ, և
արիւնչեղութեանց ալ պատճառ եղաւ. Ի՞նչպէս
հիմայ, Բնչ Համարձակութեամբ և
կը յանդգնի մեր ազգային և բոլոր Արեւելան ի-
րաւունքները յափշտակելու և ջնջելու. Ազգա-
յինք, իրեն ըւենք որ Հայոց Ազգը իր քրիստո-
նէութիւնը արիւն թափելով ստացաւ, քրիստո-
նէութեամբը ազգութիւնը պահեց ազգային իրա-
ւանց պաշտպանութեանը Համար Հայաստանի
գաշտերը ազգային անմեղ արեամբ ներկուեցան
ազգութեան ոգուվ և Հաւատքին զօրութեամբ
բիւրաւոր Մարտիրոսներ և Վկաններ պատկռե-
ցան և փառաւորուեցան. մենք ենք և միշտ պիտի
ըլլանք մեր Աստուածասէր և Ազգասէր Հարց Հա-
րազատ զաւակներ. անոնց ազգութեան արիւնը
մեր իրակներուն մէջ ջերմ և եռանդուն է. անոնց
աներկիւղ առաքինութիւնը, խորհրդոց և մասց
Հաստատութիւնը, միաբանութեան և միութեան
յարաւեւութիւնը, մէկ խօսքով՝ ազգային իրա-
ւանց և ազգութեան պաշտպանութեանը Համար
մեզի աւանդած փառաւոր օրինակը և արիստկան-
քաջալերութիւնը մեր մոյքին և սրտին մէջ ան-
ջնջելի է. Վաստածսիրութեամբ Տշմարիտ Կա-
թողիկէ քրիստոնեայ ըլլալով, և Ազգասիրու-
թեամբ Հայոց ազգին փառքը և շքեղութիւնը
աւելցնելով խորտակենք օտարաց և թշնամեաց
յարձակմունքը և անիրաւ. յափշտակութիւնը
յաղթենք զժուարութեանց, վայելնք և յետա-
զայից վայելել տանք մեր արիւնթեան և յաղ-
թութեան աղնիւ պտուղներն ու արդիւնքը,
և անմահ միշտակաց արժանի ըլլանք:

ՊԵՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՅՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԳԻ

Վարտ. 17: — Պարսի Յովհաննես
Առեփաննուեանց կարգեցաւ Երեցիով Ա.
Տաճարին Լշմիածնի: